ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

«26» հունվարի 2024թ. No 3/1-գ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ**

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ **ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/1-Ա**

Մասնակից՝ **«ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ**

/ՀՎՀՀ՝ 00522502, գործունեության հասցե՝ ք. Երևան, Երկաթուղային 4, 2/6/

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար չիրկիզվող պահարանների ձեռքբերման նպատակով 28.12.2023թ. հայտարարվել է ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/1-Ա ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգը, որին հայտ է ներկայացրել «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ն: Գնահատող հանձնաժողովը 12.01.2024թ.-ին կայացած նիստում արձանագրել է, որ «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը ամբողջությամբ չի համապատասխանում ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/1-Ա ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին՝ ներկայացված է այլ մրցույթի փաստաթուղթ, ներկայացված չէ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ հավելված 1.3., առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը բացակայում է՝ լրացված չէ: «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ին ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված փաստաթղթերը:

Սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ն չի ներկայացրել շտկված փաստաթղթերը և հիմք ընդունելով ՀՀ


0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 42-րդ կետը հանձնաժողովը մերժել է «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

## 1. Եզրահանգում

Վերոնշյալ կարգավորումների համատեքստում անդրադառնալով առկա փաստական հանգամանքներին՝ պետք է արձանագրել, որ ի հակադրություն հրավերի պահանջներին՝ որպես գնման գործընթացի մասնակից հանդես եկած «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ն՝ չներկայացնելով հրավերով սահմանված փաստաթղթերը, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, որոշում եմ «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

1/26/2024

X

ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN EDGAR 4010690054 ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ